

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ATLAS ZUM KATALOG DER ARMENISCHEN HANDSCHRIFTEN. 1. Armenische Palaeographie. Erläuterungen zu den schriftproben ans den armenischen. Handschriften der königl. Uneversitäts bibliothek in Tübingen v. Franz Nicolaus Finck. 2. Kleinarmenische Miniaturenmaterei Die Miniauren der Tübitnger Evangeliass Ma XIII 1 vom J. 113, bezw. 893 n. chr. v. Josef Strzygowski. Tübingen 1907.

Տիւրինդենի համալսարանի մատենադարանի վարչութիւնը վաղուց մտադրութիւն ունէր հայ ձեռագիրների մի ժողովածու ձեռք բերել. այդ ցանկութիւնն իրագործուեցաւ 1904 թ., երբ հայազէտ դր. Ֆինկի միջնորդութեամբ մատենադարանապետ Գայգէր կարողացաւ հանգուցեալ Էնֆիանեանցից 6000 բուբլով գնել նորա 104 հատորից բաղկացած ժողովածուն: Այդ ձեռագիրների ցուցակը պատրաստեցին պ. պ. Ֆրանց Նիկոլայու Ֆինկ և Լ. Գեանջեցեան ¹⁾: Ներկայիւս մեր առաջ է դրուած այդ ցուցակի քարտէզը, որ մի տեսակ բացատրական յաւելուած է կամ ուսումնասիրութիւն հայ հնագրութեան և մանրանկարչութեան: Առաջին խնդրով զբաղուել է դր. Ֆինկ և երկրորդով նշանաւոր արուեստագէտ և հնագէտ Ստիգոլսկի: Ատլասին մի փոքրիկ նախարան է կցուած մատենադարանապետ Գայգէրի կողմից, որից տեղեկանում ենք, որ Շտուտգարդցի գործարանատէր Էրնստ Սիգլինը ոչ միայն հոգացել է ձեռագիրների գնման և վերոյիշեալ ցուցակը կազմելու ծախսը, այլ և այս Ատլասի տպագրութիւնը:

Դր. Ֆինկը իւր համառօտ ուսումնասիրութիւնը հիմնել է Տիւրինդենի համալսարանի վերոյիշեալ ձեռագիրների վերայ:

¹⁾ Systematisch-Alphabetischer Hauptkatalog der königl. Universitätsbibliothek zu Tübingen. XIII. Verzeichnis der armenischen Handschriften. Tübingen 1907.

Նա հինգ տեսակ գրեր է որոշում առանց ի նկատի առնելու անցողական աստիճանները: Յարգելի գիտնականը նպատակ չ'ունի հայ հնագրութեան մանրամասն ուսումնասիրութիւն տալ, այլ ուղեցոյց լինել Եւրոպացի նորուստ հայագէտներին ձեռագիրներով զբաղուելու: Նա իւր համառօտ ուսումնասիրութեան որպէս լուսարանութիւն կցել է 24 նոյնատիպ օրինակներ, որոնք ընթերցողին իրական դադափար են տալիս հայ գրերի ծագման և փոփոխութեան մասին:

Առաջին և հնագոյն գիրը Սկզբնագիր (Unzi alschrift) կամ զըլ-խագիր կոչուածն է, որ մեր մէջ սովորական է մեծ երկաթագիր անուանել: Երկրորդ տեսակը կէս սկզբնագիրն (Halbunzialschrift) է կամ մրջին երկաթագիրը, որ առաջին տեսակից զանազանուած է իւր անկիւնաւոր գծերով, այն ինչ զլիսագիրը կլոր է: Այս տեսակին է պատկանում նաև փոքր երկաթագիրը: Միջին և փոքր Մեսրոպեան երկաթագիր (Տաշեան), որ միայն անկիւնաւոր չէ, այլ և յաճախ կլոր գծերով: Այս երկու տեսակներէ վերայ աւելացնում է Ֆինկը բլտրագիրը, նոտրագիրը և շրագիրը: Հակառակ Ֆինկի Քարամեանը Բերլինի արքայական մատենադարանի հայ Ձ-ի ցուցակում¹⁾ 7 տեսակ գիր է ընդունում, միջին և փոքր երկաթագրերը համարելով տարբեր տեսակներ, իսկ շեղագիրն էլ հնի և նորի բաժանելով: Արդարև զրանց տարբերութիւններն այնքան մեծ են, որ աւելի հեշտ կարելի է Քարամեանցի հետ համաձայնուել, քան Ֆինկի: Իսկ Տաշեանը²⁾ ընդունում է 9 տեսակ գրեր անցողականներով: Հակառակ Քարամեանցի համաձայն ենք Ֆինկի այն կարծիքին, որ Լազարեան ձեմարանի աւետարանի գիրը 887 թ., որ թուականով ձեռագիրներից ամենահինն է, կասկածելի է նոյն համարել ս. Մեսրոպի կազմած տառերի հետ, որոնք անշուշտ փոփոխութիւն են կրել չորս դարու ընթացքում, որքան էլ ընդհանուր տրպը պահած լինին: Է. դարուց Մնացած արձանագրութիւններ (Կոմիտաս կաթուղիկոսի և Ներսէս Գ-ի) համեմատութիւնը հաստատում է այս կարծիքը: Լազարեան ձեմարանի աւետարանի գիրը ընդհանուր նմանութեան հետ նուրբ տարբերութիւններ ունի այս արձանագրութիւններից, որոնք միմեանց շատ նման են: Մինչև այժմ հրատարակուած ցուցակների հիման

¹⁾ Verzeichnis der armenischen Handschriften der künigl. bibl. zu Berlin. 1888.

²⁾ Յուլյակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, եր. 1045—1046 և Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ Վիեննա, 1898 եր. 43 և շար.

վերայ հեղինակը թուականով ձեռագիրներն մի աղիւսակ է կազմում և դարերի համեմատ դասաւորում, ցոյց տալու համար, թէ ճիշտ դարում ճիշտ տեսակ գիրը աւելի զործածական էր, Եղբակացութիւնն ի հարկէ կարող է միայն հաւանական ճշտութիւն ունենալ, բայց ոչ անպայման: Իրողութիւն պէտք է համարել, որ զրի այս կամ այն տեսակը որոշ ժամանակ իշխող է եղել, թէև միւս տեսակներն էլ գոյութիւն են ունեցել: Երկաթագրի տեսակների հետ երևան են գալիս և միւս գրերը, թէև հնում երկաթագիրն աւելի գերակշռող էր: Ալիշանը Այբարատի մէջ էր. 498 բերում է 999 թուին զբաժ բոլորագիր մի յիշատակարան (տես և Տաշեանի Ակնարկ էր. 68) Մայր Աթոռի մատենադարանի Կ. ց. № 902 նոտրագիր է 1313 թուից, իսկ Սարգիս Սանահնեցու յիշատակարանը շեղագիր է 1041 թուից¹⁾: Մեզ յայտնի են Մ. Աթոռի մատենադարանում ուրիշ կարևոր ձեռագրեր հին բոլորգիր Գ. ց. № 102, գրուած 975 թուին, իսկ Կ. ց. № 899 (919) յիշատակարանը շեղագիր է 1215 թ., որ մեր առօրեայ գրութեան ձևերն է իշխեցնում: Սակայն սովորական բոլորգիրը իշխող է դառնում ԺԲ. դարից, իսկ նոտրագիրն ու շեղագիրը աւելի յաճախ են զործածւում ԺԷ. և ԺԸ. դարերում: Մագման տեսակէտով ամենահինն անշուշտ մեծ երկաթագիրն է, միւսների ծագումն անորոշ է: Բոլորագրից են ծագել նոտրագիրն ու շեղագիրը: Կլոր, մեծ երկաթագիրը աւետարանների համար զործ էր անւում մինչև ԺԳ. դարը:

* * *

Ատլասի երկրորդ մասն է կազմում Գրացի համալսարանի ուսուցչապետ Իոզեֆ Ստիգզոսկու «Փոքր Հայաստանի Մանրանկարչութիւն» վերնագրով գնահատելի աշխատութիւնը, Յարգելի գիտնականը հայ բանասիրութեան մէջ արդէն նշանաւոր է հանդիսացել իւր *Das Etschmindzin Evangeliar* (Beitrage der armenischen, ravennatischen u. syro-ägyptischen kunst) 1891, Wien աշխատութեամբ, ուր նա ուսուցնասիրութեան նիւթ է դարձնում՝ էջմիածնի ճարտարապետութիւնը և փղոսկրեայ հուշակաւոր աւետարանի կազմն ու մանրանկարչութիւնը: Նա յօդուածներ է գրել հայոց մանրանկարչութեան մասին «Հանդէս Ամսօրեայի» և «Byzantinische Zeitschrift» թերթերի մէջ 1902 թ. հրատարակուած Մլթէ Թագուհու աւետարանի զարգանկարների առթիւ²⁾: Հայոց ճարտարապետութեան մասին խօսում է ուրիշ առիթներով ևս: Նա աչքի

¹⁾ Ալիշան Շիրակ. էր. 50 և Տաշեան Ակնարկ. էր. 72.

²⁾ Զարգանկարք Աւետարանի Մլթէ Թագուհույ. Վենետիկ 1902.

ընկնող տեղ է բռնում ընդհանրապէս բիւզանդական արուեստի ուսումնասիրութեան մէջ և մի շարք կարևոր աշխատութիւններ ունի այդ մասին: Ներկայիւս նորա ուսումնասիրութեան նիւթն է կազմել Տիրքինգենի համալսարանի հանգուցեալ Էնֆրիանճեանից ձեռք բերած ժողովածուի մի աւետարանը, Ma XIII I. գրուած 1113 թուին Դրազարկում, բայց ընդօրինակուած 893 թուի մի ձեռագրից: Պ. Սաշիգովսկին հիմնուելով աւետարանի յիշատակարանի վրայ, կարծում է, որ ընդօրինակութիւնն էլ Դրազարկում է կատարուած: Սակայն Ք. դարում Դրազարկի գոյութիւնը կասկածելի է. այդ նշանաւոր մենաստանը հանդէս է գալիս մեր պատմութեան մէջ միայն ԺԲ դարու սկզբից և հաւանօրէն նորա ծագումը կապ ունէր Ռուբինեանց իշխանութեան ծագման հետ: Թէպէտ Կիլիկիայում Ռուբինեաններից առաջ էլ եղել է հայ գաղթականութիւն, բայց ոչ մի աւանդութիւն, ցուցում չունինք Դրազարկի այդքան վաղ գոյութեան մասին: Ձեռագրի երկրորդ յիշատակարանը, որի վրայ յարգելի գիտնականը հիմնում է իւր կարծիքը, աղճատուած է, այն էլ Կարինեանի թղթերից հանուած ընդօրինակութիւնն և ոչ բուն զրչի ձեռքով գրածը: Ձեռագիրը սկզբից պակաս է մինչև ԺԲ. 23. պակաս են նաև սկզբի խորաններն ու մանրագրերը, ինչպէս և Մատթէոսի պատկերը:

Հեղինակը նախ նկարագրում է Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս աւետարանիչների նկարներն ու այդ աւետարանների սկզբնազարդերը: Մարկոսի վերարկուն կապոյտ է, համապատասխան կամարների գոյներին. սև մազերով և կարճ, կլոր միրուքով. աւետարանիչը նստած է փոքրիկ զրասեղանի առաջ, որ ծածկուած է մազաղաթի թերթով: Նստած է նոյնպէս և Ղուկասը կարմիր աթոռի վրայ, դրուած կանաչ յատակին. մազերը սև են, իսկ միրուքն սպիտակ. ներքնազգեստը կարմիր-մանիշակազոյն, վերարկուն կանաչ-մոխրագոյն մանիշակազոյն ստուերներով: Յովհաննէսը ծերունի է, կապոյտ ներքնազգեստով և կապտամանուշակազոյն վերարկուով: Նկարիչը բոլոր պատկերների և սկզբնազարդերի համար զործ է դրել գոյների բազմազանութիւն արևելեան գորգերի նման: Մատթէոսի պատկերը չկայ, բայց նաև նստած պիտի լինէր, ինչպէս միւս աւետարանիչները: Հազուադիւս է ձեռագիրների մէջ, որ աւետարանիչները տարբեր դիրքերով նկարուին. հեղինակին յայտնի է միայն Լայպցիգի աւետարանը, որի մէջ միայն Յովհաննէսն է նստած, իսկ 586 թ. գրուած ասորական մի ձեռագրի մէջ երկուսը նստած, և երկուսը կանգնած են: Սովորաբար ասորա-եգիպտական արուեստի մէջ աւետարանիչները կանգնած են, իսկ Փոքր-Ասիայում նստած:

Մեր էջմիածնի փղոսկրեայ աւետարանի մէջ չորսն էլ կանգնած են զոյգ զոյգ. և չեն դրուած իւրաքանչիւր աւետարանի սկզբում, այլ բոլորն էլ Մատթէոսի խորաններից յետոյ: Մեր հնագոյն աւետարանների մէջ ևս կրկնուած է նոյն երևոյթը. օր. 1033 թ. դրուած № 236 աւետարանը և ուրիշները: Թարգմանչաց վանքի աւետարանում, որ այժմ գտնուած է էջմիածնում, Յովհաննէսը կանգնած է, իսկ Մատթէոս նստած իրենց աւետարանների սկզբում. տարարախտարար Մարկոսն ու Ղուկասը չկան, բայց հաւանորէն նրանք էլ նստած պիտի լինէին: 902 թ, դրուած Մլքէ Թադուհու աւետարանի մէջ Մատթէոսն ու Մարկոսը նստած են, իսկ Ղուկասն ու Յովհաննէսը կանգնած. այս և փղոսկրեայ աւետարանի մանրանկարները ասորական ծագում ունին:

Պատկերները ստեղծուած ընտելութիւն են կրում առ հասարակ. նկարիչը ճշտութեան և տարածութեան մասին դադափար չունի, բայց շատ վարպետ է մանրազարդերի մէջ կամ իրեղէններ և ճարտարապետական զարդեր նկարելիս: Այլպիսի աշտարակներ նկարուած են աւետարանիչների պատկերների հետ իբրև զարդեր. դոցանից ուշադրութեան արժանի են յատկապէս Ղուկասի և Յովհաննէսի աղիւսազարդ պատերով աշտարակները, որոնք պարզ արևելեան կնիք են կրում: Ղուկասի աշտարակներից մէկի դուռը վերևում կամար է կազմում աստամաձև զարդերով. կամարի հիմքից, ներքևում, աջ և ձախ հորիզոնական շարունակուած է նոյն զարդը: Այս երևոյթը ճարտարապետական առանձնայատկութիւն էր Միջագետքի համար, որ հոռմա-քրիստոնէական շրջանում Ասորիք է անցնում: Արևելեան են նաև աշտարակների սոխաձև գմբէթները: Աղիւսազարդ աշտարակների նման երևոյթներ գտնուած են Կայրէտում: Մարկոսի և Յովհաննու սկզբնազարդերը նոյնպէս բնորոշ են այս արուեստի հայրենիքը գտնելու համար. Յովհաննու պայտաձև զարդը արևելեան է կամ Փոքր-Ասիայի իսլամական տիրապետութիւնից առաջ: Աւետարանիչների նշանակները (symbole) նոյնպէս Միջագետքի արուեստի հետքեր են կրում, ինչպէս Մարկոսի առիւծի և Յովհաննու արծուի թևերի վերայ նկատելի երկրաչափական կլոր ձևերը: Մարկոսի առիւծը յատկապէս Սասանեան դրոշմ ունի: Նկարիչն առ հասարակ իւր բոլոր պատկերները ձևակերպում է մանրազարդօրէն. նորա բոլոր պատկերները բաղկացած են որոշ մոտիւններից, հիւսուած զծերից, արմաւենիկների բարունակներից, շերտազարդերից, զաւազաններից (Bäumchen), աստամաձև և ձուաձև զիկզակներից և այլն:

Հեղինակը իւր Das Etschmiadzin Evangelias—էջմիածնի ա-

ւետարան—գործի մէջ այն կարծիքն էր յայտնել, թէ Հայոց մէջ ասորական մանրանկարչական ազդեցութեան հետևում է անմիջապէս բիւզանդականը: Բայց նոր նիւթերի ուսումնասիրութեամբ եկել է այն եզրակացութեան, որ թէ Հայոց և թէ Բիւզանդացիների զեկորատի արուեստը կախումն ունի պարսկականից: Եւ Տիւրքինզնի աւետարանը այս մնացորդներից մէկն է, որ պարզում է այս իրողութիւնը: Յետին ժամանակներում միայն, երբ պարսկական արուեստը, զուցէ Հայոց միջնորդութեամբ, Բիւզանդացիներին անցաւ և բարձր զարգացման հասաւ, նկատելի է Բիւզանդական ազդեցութիւնը Հայոց մէջ: Մեծ Հայքի արուեստը անկախ էր Բիւզանդականից և եթէ նմանութիւններ կան այդ արուեստների մէջ ընդհանուր հայրենիքով, այսինքն պարսկական արուեստի ազդեցութեամբ պէտք է բացատրել: Մառի ձեռքով կատարուած Անիի պեղումներն էլ այն եզրակացութեան համար նիւթեր են ապիս: Անիի անօթները շատ նման ինքսոնեստում գտնուած անօթներին, որոնց հայրենիքը պրոֆ. Կոնզակովի կարծիքով Միջագետքն ու Ասորիքն է, մասամբ և Եգիպտոսը: Հայաստանը հաւանօրէն միջնորդ երկիրն է եղել արուեստի այդ արտադրութեան հիւսիսի համար, ինչպէս մանրանկարչական արուեստի համար եղել է Բիւզանդիայի վերաբերութեամբ: Տիւրքինզնի աւետարանից զատ մեր մատենադարանում ձեռագիրներ կան բուն Հայաստանում զարդանկարուած, որոնք ասորական և ընդհանրապէս արևելեան դրոշմ են կրում, և ոչ Բիւզանդական: Եւ մեր խօսքը ԺԶ և ԺԷ դարերի պարսկական ազդեցութեան չի վերաբերում, որ շատ զօրեղ է, այլ հնազոյն շրջանի: ԺԳ դարում Մեծ Հայքում ծաղկում է գեռ ևս ճարտարապետական և մանրանկարչական արուեստը և այս շրջանի ուշադրութեան արժանի մնացորդներ ունինք Մ. Աթոռի մատենադարանում:

Պրոֆ. Սաչիգովիկի պաշտպանում է այն նոր կարծիքը, թէ արուեստի նոր ձևերի հայրենիքը միջին դարերում ոչ թէ միայն Միջերկրականի փոքրն են, այլ ասիական երկրները, որոնց կեզրոնն է Իրանն ու Միջագետքը: Այստեղից է այդ արուեստը դէպի արևելք՝ Հնդկաստան և արևելեան Ասիա, և արևմուտք՝ Բիւզանդիա և իսլամական երկրները տարածուել: Այս արուեստի միջին օղակներից մէկն է Տիւրքինզնի աւետարանը: Նա համեմատում է թ դարու Հայոց ճարտարապետութեան և Միջագետքի, Պարսկաստանի, Կոպտական արուեստի օրնամենաները միմեանց և Տիւրքինզնի աւետարանի մանրազարդերի հետ և այն եզրակացութեան է դալիս, որ նման են միմեանց: Մարկոսի սկզբնազարդի եզրների գունաւոր թեփերը մատնացոյց են անում

այդ արուեստի ծագման հայրենիքը՝ Կապադովկիայի և Միջագետքի մէջ ընկած երկրները: Աւելի պարզ ապացոյցներ են աստարանի սկզբնազրեբրի և լուսանցքների զարդերը, առաջին տողերը գրուած են այստեղ խեցոսկով (Muschelgold), այն ինչ նոյն ժամանակի Բիւզանդացիք թերթոսի (Blattgold) են գործածուած: Բացի այս տեխնիքական տարբերութիւնից զարդերի մոտիւնները նման են պարսկականին և ոչ բիւզանդականին: Լուսանցքի մանեկաձև զարդերն էլ յատուկ են արևելեան և ոչ բիւզանդական արուեստին: Մանեկաձև զարդերի մէջ ճիշտ նոյն զարդանկարչական մոտիւններն են կրկնվում, ինչ որ մեծ պատկերների մէջ: Արուեստի հայրենիքը բնորոշելու համար առանձին նշանակութիւն ունին լուսանցքներում կրկնուած կիսարմաւենիկների և հիւսուածքների զարդերը: Դրանցից մէկը յատկապէս, որի հիմքն են կազմում երկու արմաւենիկներ հորիզոնական ձևով, որոնց ցողունները միմեանց կտրում և ձուածն են կազմում և ապա նորից խաչուելով, երկու արմաւենիկներով վեր բարձրանում, յիշեցնում է Կայրէի արանքական գերեզմանները՝ 806—906 թուերի գործ: Տարբեր երկիրների արուեստների այս նմանութիւնը բացատրում է նրանց ընդհանուր նախահայրենիքով, որ Պարսկաստանն է: Նոյնը կարելի է ասել կոպտական և հայոց մանրանկարչութեան նմանութիւնների մասին:

Չորրորդ զարից արդէն արևելեան արուեստի արդիւնքները փոխադրուած են Միջերկրականի ափերը վաճառականների և վանականների ձեռքով: Ազգերի գաղթականութեան շեռ նրանք տարածուած են Իտալիայում և հիւսիսում, որով և պէտք է բացատրել հեղինակի կարծիքով գերմանական արուեստի նմանութիւնը արևելեանի հետ, իսկ արաբների միջոցով հարաւում: Սելջուկեանների հետ հաւանօրէն այդ արուեստն անցնում է Կիլիկիա և Բալկանեան թերակղզին: Արևելքի և Արևմուտքի միջնորդ հանդիսանում է այդ ժամանակ Կիլիկիայի Հայոց թագաւորութիւնը, ուր Դրազարկը իւր միաբաններով գիտութեան և արուեստի կեդրոն էր այդ ժամանակ: Ինչպէս Խաչակրաց արշաւանքների ժամանակ Կիլիկիան միջին և արևելեան Ասիայի և արևմուտքի հաղորդակցութեան դուռն էր քաղաքական և վաճառականական տեսակէտով, այդպէս էր նաև մանրանկարչական օրնամենական ոճի համար Բիւզանդացիների, Հայոց և սլաւոնական ազգերի մէջ: Հեղինակը խոստանում է կրկին դառնալ Դրազարկի պատմութեան՝ արուեստի կողմից: